ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/38Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2015 թվականի նոյեմբերի 26-ին կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/38Հ պայմանագրում 2018 թվականի փետրվարի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ-15/38Հ պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում:
Փոփոխության հիմնավորում	ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 36-րդ կետի 12-րդ ենթակետ և Պայմանագրի 4.1.2 և 7.3 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

26.11.2015թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/38Հ գնման պայմանագրի

ք. Երևան 16.02.2018թ.

«ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԵՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 26.11.2015թ. կնքված N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/38Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.2 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել **240 700 (երկու հարյուր քառասուն հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ	<<ԵՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Էջմիածին, Տերյան փ. 971/7
կառավարական տուն 3	<<Արդշինբանկ>> ՓԲԸ Էջմիածին մ/ճ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2475905962160000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 04722601
Հ/Հ 900011012706, ՀՎՀՀ 02565827	Տնօրեն՝
Աշխատակազմի ղեկավար՝	
_____ Ա. Մկրտչյան	_____ Ռ. Ավագյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
26.11.2015թ. կնքված ծառայությունների մատուցման
N ՔՆ-ԲԸԱՀԾՁԲ–15/38Հ գնման պայմանագրի
16.02.2018թ. կնքված N 4 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 06)

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություններ	-	-	8 900	58 700	58 700	58 700	167 900	167 900	167 900	240 700	240 700	240 700	240 700

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012706, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ԵՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Էջմիածին, Տերյան փ. 971/7
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Էջմիածին մ/ճ
Հ/Հ 2475905962160000
ՀՎՀՀ 04722601

Տնօրեն՝

_____ Ռ. Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ.